ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	**Հուշակերտ**
ՄԱՐԶ	**Արմավիր**

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հուշակերտ գյուղը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի մարզում՝ Սարդարապատի հուշահամալիրից քիչ հեռու: Անվանումը ստացել է հուշահամալիրի կառուցումից հետո: Մինչ այդ այն կոչվել է Ճախվառուտ: Համայնքը վերաբնակեցվել է 1950թ. Թալինի շրջանի Միջնաձոր և Ձորաշեն գյուղի բնակիչներով: Բայց գյուղը կառուցվել է ավելի վաղ, միայն 5 ընտանիք են բնակվել: Համայնքն ապահովված է խմելու ջրով 75%-ով, որը խորքային հորից է դուրս բերվում և այնքան էլ չի համապատասխանում խմելու ջրի նորմաներին: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են խաղողի, դեղձի, ծիրանի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Մշակվող հողատարածքները ոռոգելի են, մի մասը ոռոգվում է պոմպակայանի միջոցով:

Անասնապահությամբ զբաղվողները հիմնականում արտադրում են կաթ և միս:

Համայնքում առկա է մշակույթի տուն, մսուր-մանկապարտեզ, գրադարան, խմելու ջրի ջրամատակարարման համակարգ, ներհամայնքային ոռոգման համակարգ, ներհամայնքային կամուրջ, գերեզմանատուն: Վատթար վիճակում է մսուր-մանկապարտեզը, որը խիստ կարիք ունի հիմնամորոգման: Կոմունալ ջրագծերը լրիվ շարքից դուրս են եկել և ջրերը ներթափանցում են շենքի հիմքի տակ: Գրադարանը համեմատական կարգով ավելի բարվոք է ,մշակույթի տունը վերանորոգման կարիք ունի, իսկ գրադարանը համալրել նոր գրքերով: Խմելու ջրի ներքին ցանցը կառուցվել է 1972թ. և վերանորոգման կարիք ունի, որպեսզի վերացվի ջրի կորուստը, որը կազմում է մոտ 25%: Դրան հակառակ շատ լավ վիճակում է համայնքի ներհամայնքային ոռոգման համակարգը: Համայնքը գազաֆիկացված է 100%: Փողոցների մեծ մասը ասֆալտապատ են , որը կատարվել է 1986 թվականնին: Կանոնավոր 30 րոպե ընդմիջումով աշխատում է տրանսպորտը

Դպրոցը կարիք ունի ներքին հարդարման:Չի գործում խմելու ջրի ներքին ցանցը, որը անջատված է: Գործում է միայն բակում տեղադրված ծորակը: Մսուր-մանկապարտեզի շենքը կարիք ունի կապիտալ վերանորոգման և չի գործում: Մսուր-մանկապարտեզային տարիքի երեխաների խնամքը շատ է դժվարանում մանավանդ գյուղատնտեսական աշխատանքների շրջանում:

Համայնքում կա մշակույթի տուն, որը իր հիմնական նպատակին չի ծառայում : Չի գործում ոչ մի խմբակ, երիտասարդությունը իր ազատ ժամանակը անցկացնում է հեռուստացույցի առջև , չի գործում գրադարանը: Մարզահրապարակ չլինելու պատճառով երիտասարդությունը օգտվում է դպրոցի խաղահրապարակից: Համայնքում գործում է նորակառույց »Առողջության պահպանման կենտրոն«, որը սպասարկում է նաև հարևան գյուղերին: Կենտրոնը հագեցած է նաև ժամանակակից սարքավորումներով և շտապ օգնության մեքենայով: Բուժ. անձնակազմը վերապատրաստվել է ՝ որպես ընտանեկան բժիշկներ: Նորակառույց թաղամասերում անցկացվել է խմելաջրի ներքին ցանց և գազաֆիկացվել է:

Համայնքում չկա կույուղու ներքին ցանց:

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի /համայնքապետի/ կողմից, որն ընտրվում է հինգ տարին մեկ անգամ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆՆԿԱՐԱԳԻՐ

Աշխարհագրական դիրքը

Հուշակերտ համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի մարզում՝ ծովի մակարդակից 900 մ բարձրության վրա: Գյուղի կլիման, ինչպես բնորոշ է Արարատյան դաշտի կլիմային, ձմռանը մեղմ է , ամռանը՝ շոգ: Բայց այս վերջին երկու տարում անսպասելիորեն ջերմաստիճանը իջնում է և այգիները ցրտահարվում են:

Վարչական տարածքը կազմում է 570.0 հա:

3.ՀԱՄԱՅՆՔԻԿԼԻՄԱՅԱԿԱՆՀԱՄԱՌՈՏԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումներիմիջինտարեկանքանակը (մմ)	115
Օդիմիջինջերմաստիճանըհունվարին(^{0}C)	-15+5
Օդի միջինջերմաստիճանը հուլիսին(^{0}C)	+25+33

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) Հուշակերտ 1.2)0 1.3)0	0	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Բաղրամյան	
3.Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	50	
3.2) մարզկենտրոնից (կմ)	12	
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	7	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	18	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0.2	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	0.2	
4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	900	
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	570.0	
6.Սահմանակից համայնքների անվանումները	Շենավան, Նոր Ամասիա,Արաքս,	
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	Hushakert.armavir@mta.gov.am	

514.58. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	094159600
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	-
11.Համայնքի հեռախոսային կոդը	0233
12.Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ)	այո
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1007
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1024
2. Գրանցված ծնունդների քանակը	9
2.Մահացության դեպքերի քանակը	10
3.Ամուսնությունների քանակը	5
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	238
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	13
7. Կենսաթոշակառուների քանակը	132
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	14

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթականդպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններիքանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.

1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	38000
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	156

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1.Հողեր, ընդամենը (հա)	570
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	475
3.Բնակավայրերի ընդհանուրտարածքը(հա)	61.79
4.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	532
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	480
7. Խոզերի գլուխաքանակը	290
8. Գյուղատնտեսական տեխնիկա	25
8.1տրակտորներ (քանակը)	24
8.2կոմբայններ (քանակը)	1
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	238

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.Էլեկտրական ենթակայանների քանակը	2
2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	1
3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	10
6.2 Էքսկավատորների քանակը	ոչ
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	ոչ
6.7Բազմաֆունկցիոնալ կոմունալմեքենաներիքանակը	ոչ
6.8Վակումային փոշեկուլմեքենաներիքանակը	ոչ
6.9Ավտոաշտարակների քանակը	ոչ
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	1
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1.Ընդամենը եկամուտներ	23645.0	22187.0
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդթվում՝	11300.8	9842.8
2.1 հողի հարկ	5420.8	5182.3
2.2 գույքահարկ	2780.0	2395.5
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	12344.2	12344.2
3.1 դոտացիա	12344.2	12344.2
3.2 սուբվենցիա	0	0
4.Մուտքեր հողի օտարումից	1000.0	0

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	23645.0	21969.8

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	2374.0	2374.0

Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	2374.0	2374.0

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	12 6
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	15609.6
3. Ավագանու անդամների թվաքանակը	5

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Խմելուջրի ներքին ցանցի վերանորոգում	ներդրումներ
Համայնքային նշանակության փողոցների վերանորոգում	ներդրումներ